



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

01 հունիսի 2023

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ երեխաներ,

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ, ամենալուսավոր և ուրախ տոներից մեկի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ: Սիրելի փոքրիկներ, դուք եք մեր վաղվա օրվա կրողներն ու հայրենիքի ապագան կերտողները: Ուստի մեզանից յուրաքանչյուրի պարտքն է ստեղծել լիարժեք ու բարեկեցիկ պայմաններ՝ Ձեր երջանիկ մանկության համար:

Հարգելի՛ ծնողներ և մեծահասակներ, մենք ունենք կարևոր առաքելություն՝ տալ հասարակությանը բարոյապես կիրթ և զարգացած սերունդներ: Ցանկությունների շղթայում առաջնայինն այն է, որ յուրաքանչյուր երեխա ապրի ու մեծանա խաղաղ երկնքի տակ, դաստիարակվի ընտանեկան ջերմ մթնոլորտում՝ շրջապատված ուշադրությամբ և հոգատարությամբ:

Սիրելի՛ երեխաներ, իմ փոքրիկ բարեկամներ, թող մանկության Ձեր մոլորակում լինի հավերժ խաղաղություն, սեր, արև ու ջերմություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ